վին ազգն Հայոց համահաւասար 'ի մեծէ մինչև ցփոքունս, իբրև մի հօտ հաստատուն 'ի պատ-ճառէ անխախտելի Օրինաց իւրեանց, զի երևեսցին ամենեքեան իբր մի կամք, մի խորհուրդ, մի ներգործութիւն, մի պատիւ և մի պատիժ. և ամենեքեան զոհ 'ի միմեանց, զանկատ ոչ մի ումեքէ, զի ոչ ոք իցէ որ պարծելով պարծեսցի իբր ինքն մեծ և ոչ ոք իցէ զի թարշամելով նուազեսցի իբր թէ ինքն կրտսեր մեծասցի և առաւելասցի. ամենայն բարեգործութեան գործող և փառաւոր առնէ գործողին շահեցուցանելով հասարակապէս ազգս իւր և բառցցի և կոբընչեսցի ամենայն չարագործ ըստ արժանի գործոյն ձեռաց իւրոց ըստ Օրինօք՝ առ 'ի պատիւ հասարակ ազգի, բարեպէս և յոյժ հեշտութեամբ կարէք կառուցանել բոլոր ազգն Հայոց բնութիւնս ձեր հաւասարապէս իբր տուն ձեր. նմանս հիմն հաստատութեան անխախտելի յօրէնս ձեր սիւնք կարգադրութեան արդարագոյնեղ խորհրդակիցս ձեր և յանձն առնլով առաստաղն տան ձերոց 'ի վերայ գլխոյ ձերոյ կատարելապէս հնազանդութիւն ձեր 'ի Օրինաց ձերոց, զի զացուք դուք ամենեքեան ըստ անձին ձերոյ տուն, և հիմն, և սիւնք, և առաստաղ ձեր, և տանուտէր ձեր դատախազ սպասաւոր և դատաւոր ձեր, և հաւաքող պաղոյ 'ի տանէ ձերմէ, և ծախող 'ի վերայ տան և որդւոց և 'ի վերայ հարկաւորու-